

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Հունվարի 20—26-ը տեղի ունեցավ ՀԱՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որին ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դավթյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Սվեալովան, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Գա. Խաչիկյանը:

Ժողովում աշակերտական ՍՍՀ-ում գիտություն, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման հարցերը ՍՄԿԿ Կենտկոմի նշանակության (1981 թ.) և ՀԿԿ Կենտկոմի ղեկավարման (1981 թ.) պլենումների լույսի ներքո զեկուցումով հանդես եկավ ՀԱՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ, ՀԱՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Խոսիֆյանը: Նա խոսեց գիտական հետազոտությունների գլխավոր ուղղությունների մասին, նշեց, որ էներգետիկայի քննադավաճող առավել կարևոր խնդիրներից են էլեկտրակայանների գեներատորային հզորության մեծացումը և արևի էներգիայի օգտագործումը: Հաշվարկները ցույց են տալիս, որ 200 ճա տարածություն արեգակնային էներգիայի փոխարկիչների ստեղծման շնորհիվ հնարավոր է ստանալ լրացուցիչ այնքան էլեկտրաէներգիա, որքան տվել են Սևան—Հրազդան կասկադի էլեկտրակայանները:

Մետալուրգիայի քննադավաճող գիտականների ուղղությունը պետք է նվիրված լինի այնպիսի նոր արտադրությունների կազմակերպմանը, որտեղ կոմպլեքսայնորեն կորզվեն աղքատ հանքավայրերում պարունակվող քնական բոլոր տարրերը: Ընդ որում, տեխնիկան և տեխնոլոգիան պետք է նպատակամղված լինեն փոքրատոննած, գերմաքուր մետաղածուլվածքի արտադրության կազմակերպմանը: Սև ու գունավոր մետաղների խնայողության հետ կապված մետալուրգիական արտադրությունը սերտորեն շաղկապվում է փոշեմետալուրգիայի զարգացման հետ, որի օգնությամբ հնարավոր է օգտագործել մեքենաշինական արդյունաբերության մեքենաները՝ դետալները մշակելուց հետո:

Խոսելով հանրապետության մեքենաշինության առջև ծառացած պրոբլեմների մասին,

այնուհետև ասաց զեկուցողը, չի կարելի կանգ չառնել նոր ուղղության՝ ապարի հավաքման, մանրատման և վարելահողերում մանրատված ապարի արմատավորման համար մեքենաների ստեղծման վրա: Հանրապետությունում մեքենաշինության նոր ուղղությունը կապված է ոչ միայն լեռնային ապարների ֆիզիկաքիմիական հատկությունների հիման վրա հողաշերտի գոյացման և բերրիության բարձրացման հետևանքաբարյին մեթոդի, այլև հողերի ջրաօդային վիճակի բարելավման, ջերմության ու խոնավության պահպանման, հողերի էրոզիայի կանխման հետ:

Ագրոարդյունաբերական կոմպլեքսի զարգացումը և ալգ քննադավաճող գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի առաջադիմությունը պետք է նպատակամղված լինեն ճյուղի նյութատեխնիկական բազայի զգալի աճին՝ աշխատատար պրոցեսների հետագա մեքենայացման միջոցառումների հետևողական իրականացմամբ հանդերձ: Կենդանաբանները և կենսաբանները պետք է գյուղատնտեսության միևնիստության գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ իրականացնեն այն խընդիրների անվերապահ կատարման նպատակային կոմպլեքսային ծրագրերը, որոնք առաջադրված են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումի կողմից անառնների բարձրագույն տուցեղանակների, գծերի ու հիբրիդների ստեղծման և սելեկցիոն աշխատանքի զարգացման ուղղությամբ:

Լուրջ խնդիրներ են դրվում ֆիզիկատեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի գիտնականների առջև՝ մեխիորացիայի, ջրամատակարարման, ոռոգման և յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի ռացիոնալ օգտագործման քննադավաճում: Ժամանակն է մշակել Հայաստանի բոլոր ջրային ռեսուրսների կարգավորման և կառավարման ջերմակառավարվող էլեկտրամեխանիկական էժան համակարգ:

Քննության առնելով տեխնիկական առաջադիմության հարցերը, շարունակեց Ա. Խոսիֆյանը, չի կարելի կանգ չառնել ֆունդամենտալ

րնական և հասարակական գիտությունների ավելի արագ զարգացման հարցերի վրա՝ ընթացման մեթոդական մեքենաների և համապատասխանաբար ծրագրավորման բնագավառն իրականացնում է ֆունդամենտալ բնական գիտությունների կապը հանրապետությունում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արտադրության ստեղծման հետ, որն օգնում է արդյունարերության և գյուղատնտեսության զարգացմանը, ապա աստղագիտության մեջ և աստղաֆիզիկայում այդ կապերը դրսևորվել են գիտական սարքաշինության բնագավառում:

Ինչպես հայտնի է, Բյուրականի աստղադիտարանում կազմակերպվեցին հղկման ու մշակման շատ բարդ տեխնոլոգիա ունեցող օպտիկական հայելիների ստեղծման, ինչպես նաև հեռագիտակների անկյունային տեղաշարժման ճշգրիտ մեխանիզմների յուրացման արհեստանոց և կոնստրուկտորական բյուրո: Մեքենաշինության այդ գերճշգրիտ տեխնիկան վերջին տարիներին խիստ զարգացել է, որի շնորհիվ հնարավոր է դարձել հանրապետությունում ստեղծել գիտական սարքաշինության պատկանելի բազա:

Ֆունդամենտալ գիտությունների նվաճումների հիման վրա պետք է աշխատանքներ կատարվեն կենսագործունեության ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, գենետիկական, իմունոլոգիական պրոցեսների մեխանիզմների, ինչպես նաև առավել տարածված հիվանդությունների ախտորոշման և բուժման մեթոդների իմացության ուղղությամբ:

Վերջում զեկուցողն ասաց, որ, սահմանելով գիտատեխնիկական առաջադիմության արագացման գործում. գիտնականների խնդիրները, անհրաժեշտ է հատկապես ընդգծել հասարակական գիտությունների նշանակությունը զարգացած սոցիալիստական հասարակության, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, արտադրական հարաբերությունների կատարելագործման, հանրային արտադրության արդյու-

նավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության սոցիալ-տնտեսական պրոբլեմների խոր վերլուծության, ժողովրդական տնտեսության կառավարման կատարելագործման և աշխատանքային ռեսուրսների օգտագործման տեսական պրոբլեմների գծով հետազոտություններն ընդլայնելու բնագավառում: Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Կառյանը, Վ. Ղազարյանը, Մ. Մանվելյանը:

Հնդհանուր ժողովում ակադեմիայի իսկական անգամները ընտրվեցին Գ. Ս. Սահակյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը (ֆիզիկա, աստղաֆիզիկա), Հ. Տ. Արմենյանը (էներգետիկական համակարգեր), Ա. Մ. Պետրոսյանը (ատոմային էներգետիկա), Ս. Գ. Մացոյանը (օրգանական քիմիա), Ա. Հ. Գաբրիելյանը (երկրաբանություն), Վ. Բ. Ֆանաբյանը (մաթեմատիկա և կենդանիների ֆիզիոլոգիա), Է. Գ. Աֆրիկյանը (միկրոբիոլոգիա), Գ. Ա. Գալստյանը (նոր և նորագույն պատմություն), Է. Բ. Աղայանը (լեզվաբանություն), Գ. Ա. Բադալյանը (փիլիսոփայություն), Է. Մ. Զրբալյանը (գրականություն և գրականագիտություն):

Ակադեմիայի թղթակից անդամներ ընտրվեցին Ռ. Վ. Համբարձումյանը (մաթեմատիկա), Ս. Հ. Մառնիկյանը, Վ. Հ. Զրբալյանը, Դ. Մ. Սեդրակյանը (ֆիզիկա, աստղաֆիզիկա), Պ. Մ. Հեռունին (ուսողիտեխնիկական համակարգեր), Ռ. Վ. Աբալյանը (հաշվողական տեխնիկա), Դ. Լ. Արեշյանը (էլեկտրական մեքենաներ և ավտոմատիկա), Կ. Վ. Ալեքսանդրյանը (մեքենաշինություն, մեքենագիտություն), Ի. Լ. Ներսեսովը (սելսմոլոգիա, գեոֆիզիկա, գեոքիմիա), Վ. Ե. Խոջաբեկյանը (էկոնոմիկա), Ս. Հ. Մովսիսյանը (կենդանաբանություն), Գ. Հ. Բադալյանը (բժշկություն), Ս. Ս. Արևշալյանը (աղբյուրագիտություն), Գ. Ս. Խաբալյանը (արվեստագիտություն):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՑԱՆ